Սիրելի՛ կանայք, ջերմորեն շնորհավորում եմ Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ: Ձեր անսահման նվիրվածությամբ, սիրով և համբերատարությամբ դուք լցնում եք մեր կյանքը նոր երանգներով ու մղում մեզ նոր նախաձեռնությունների: Անգնահատելի է ձեր դերը մեր ապագա սերունդներին դաստիարակելու գործում: Ձեր անսպառ բարությունը, հոգատարությունը, ջերմությունը երբեք աննկատ չեն մնացել, և մենք մեծ երախտագիտությամբ խոնարհվում ենք ձեր առաջ:

ՀԱՅ ԿԱՆԱՅՔ ձեր գոյությամբ շարունակեք գեղեցկացնել մեր կյանքը: Սիրելի կանայք՝ մայրեր, քույրեր, ևս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ այս գարնանային հեքիաթ օրվա առթիվ, մաղթում եմ ձեզ և ձեր ընտանիքներին առողջություն, երջանկություն, անսահման սեր ու ջերմություն և տոնական բարձր տրամադրություն: